



*Համարը N 108-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2010.02.24/8(742) Հոդ.103
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 25.02.2010*

*Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 11.02.2010
Ստորագրման ամսաթիվը 15.02.2010
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը*

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի N 163-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 փետրվարի 2010 թվականի N 108-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի N 163-Ն ՈՐՈՇՄԱՆ ՍԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ և 11-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 163-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետը «ակտերի» բառից հետո լրացնել «կամ պաշտոնական ինկորպորացիայի ենթարկված իրավական ակտերի, իսկ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի կամ լիազոր մարմնի ղեկավարի հանձնարարությամբ՝ նաև այլ փաստաթղթերի» բառերով,

բ. 2-րդ ենթակետը «միության» բառից հետո լրացնել «և Եվրոպական համայնքի իրավական ակտերի, իսկ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի կամ լիազոր մարմնի ղեկավարի հանձնարարությամբ՝ նաև այլ փաստաթղթերի» բառերով.

գ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ ենթակետով.

«8) թարգմանական չափորոշիչների մշակումը:».

2) որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում «հայերենից անգլերեն և անգլերենից հայերեն» բառերը փոխարինել «տարբեր լեզուներով» բառերով.

3) որոշման 4-րդ կետով հաստատված կանոնադրության մեջ՝

ա. 8-րդ կետում «Non Profitable Organization» բառերը փոխարինել «Non Commercial Organisation» բառերով,

բ. 10-րդ կետի 1-ին ենթակետը «ակտերի» բառից հետո լրացնել «կամ պաշտոնական ինկորպորացիայի ենթարկված իրավական ակտերի, իսկ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի կամ լիազոր մարմնի ղեկավարի հանձնարարությամբ՝ նաև այլ փաստաթղթերի» բառերով,

գ. 10-րդ կետի 2-րդ ենթակետը «միության» բառից հետո լրացնել «և Եվրոպական համայնքի իրավական ակտերի, իսկ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի կամ լիազոր մարմնի ղեկավարի հանձնարարությամբ՝ նաև այլ փաստաթղթերի» բառերով.

դ. 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ ենթակետով.

«8) թարգմանական չափորոշիչների մշակումը:».

ե. 19-րդ կետի 4-րդ ենթակետում «կենտրոնի բաժինների» բառերը փոխարինել «կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների» բառերով.

զ. 19-րդ կետի 6-րդ ենթակետում «իբ բաժնի պետերի» բառերը փոխարինել «թարգմանությունների կենտրոնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների» բառերով.

է. 19-րդ կետի 7-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) սահմանում է թարգմանությունների կենտրոնի կառուցվածքը, հաստատում հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը»:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ մեկամսյա ժամկետում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի միջոցով ապահովել այդ կազմակերպության կանոնադրության մեջ կատարված լրացումների և փոփոխությունների պետական գրանցումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Սարգսյան

2010 թ. փետրվարի 15
Երևան